

Հ.Հ. ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 Թ-Ի ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Գործավարություն

2014 թ. -ի առաջին կիսամյակի ընթացքում համայնքի բնակիչներից ստացվել է 77 դիմումներ և առաջարկություններ, որոնք ստացել են իրենց համապատասխան լուծումները: Համայնքի բնակիչներին տրամադրվել են 374 հատ տեղեկանքներ, բնութագրեր: Հղվել են 97 հատ պաշտոնական գրություններ մարզային և ֆեդերալ ենթակայության կառույցների ղեկավարներին: Համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է 8 որոշում: Արձակվել է 32 կարգադրություն:

2. Ավագանու գործունեություն

2014 թ.-ի առաջին կիսամյակի ընթացքում համայնքի ավագնին զումարել է 1 արտահերթ և 3 հերթական նիստ: Արտահերթ նիստերը հրավիրվել են համայնքի համար խիստ հրատապ հարցերի քննարկման և լուծումներ տալու համար, մասնավորապես կատարվել է փոփոխություններ և լրացումներ համայնքի 2014 թվականի բյուջեում: Ավագանու քննարկման են ներկայացվել 32 դիմումներ և ստացել իրենց համապատասխան լուծումները: 2014 թվականի մարտի 31-ին ցրտահարությունից տուժել են 20 ընտանիք 4,38 հա այգի ցրտահարվել է: Ջրի և հողի վարձը կատարությունը հատկացրել է 552,390 դրամ ջրի և 72000 դրամ հողի հարկ:

3. Գյուղատնտեսության ոլորտ

Հաշվետու ժամանակահատվածում համայնքի առկա հողատարածքներն ու ցանքերն են՝

Բնակավայրային նշանակության հողեր _____ 320 հա.

Գյուղ. նշանակության հողատարածք _____ 564 հա, որից՝

Խաղողի այգի _____ 5.1 հա

Պտղատու այգի _____ 14.8 հա

2014 թվականին կատարվել 15,0 հա հացահատիկի, լոբու 8 հա, կարտոֆիլի 30 հա, բոստանային կուլտուրաների 36 հա, վարունգի 52 հա, լոլիկի 23 հա, սեղանի ճակնդեղ 1 հա, և այլ բանջարեղենի 18 հա ցանքեր:

Անասնազլխաքանակ

Խոշոր եղջերավոր անասուններ 305 գլուխ, որից՝ կովեր 102 գլուխ
Մանր եղջերավոր անասուններ 96 գլուխ, ոչխար, որից՝ մայրեր 19
84 գլուխ խոզեր, որից մայրեր՝ 8

4. Հողի հարկ և գույքահարկ.

2014 թվականին համայնքային բյուջեով նախատեսվել է 4221.8 հազար դրամ հողի հարկ: 01.07.2014 թ.-ի դրությամբ համայնքի հողօկտագործողներից զանձվել և մուտք է արվել համայնքի բյուջե 1312,6 հազար դրամ հողի հարկ, որը կազմում է համայնքի տարեկան հողի հարկի 101,0%-ը:

Գույքահարկը բյուջեի եկամտային մասով նախատեսվել է 1950,0 հազար դրամ: 01.07.2014 թվականի դրությամբ զանձվել և մուտք է արվել համայնքի բյուջե 1054,3 հազար դրամ, որը կազմում է տարեկան գույքահարկի 54,1% -ը: 2014 թվականի բյուջեով նախատեսվել է 40,0 հազար դրամ տեղական տուրքեր և վճարներ: 07.01.2014 թվականի դրությամբ զանձվել և մուտք է արվել համայնքի բյուջե 17,9 հազար դրամ, որը կազմում է տարեկան 44,7%: 2014 թվականի բյուջեով պետության կողմից տարվա ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիան կազմել է 21034,4 հազար դրամ, որը ֆինանսավորվել է 100% -ով: 2014 թվականի բյուջեում սեփական եկամուտները նախատեսվել են 3590,0 հազար դրամ, 01.07.2014 թ. դրությամբ սեփական եկամուտների փաստացի մուտքերը կազմել են 2564,9 հազար դրամ: Սեփական եկամուտները կատարել են 71,4 %-ով: Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարները` 300,0 հազար դրամ է, մուտք է եղել 180,0 հազ. դր. Որը կազմում է տարեկան 60%:

Ծախսեր

Ջրատառի գյուղապետարանը 01.01.2014թ.-ից մինչև 01.07.2014.թվականը կատարել է հետևյալ ծախսերը:

1. Վճարել է ընթացիկ աշխատավարձ 9518,8 հազար դրամ
2. Փոխանցվել է սոց. վճար -630,0 հազար դրամ
3. Կատարել է թերթի բաժանորդագրության ծախս - 48,8 հազար դրամ
4. Մասնագիտական ծառայության համար փոխանցվել է -58,3 հազար դրամ
5. Համակարգչային ծառայության համար փոխանցվել է -57,2 հազար դրամ
6. Փոխանցվել է էլեկտրոններգիայի գումար - 2449,7 հազար դրամ
7. Փոխանցվել է գազի օկտագործման գումար - 154,7 հազար դրամ
8. Միջոցառումների կազմակերպում` կանանց, հաղթանակի տոնի առիթով 600.0 հազ. դր
9. Ծաղկեպսակների համար - 40,0 հազար դրամ
10. Գրենական պիտույքներ ձեռք բերելու համար փոխանցվել է -250,0 հազար դրամ
11. Անապահով ընտանիքներին ցուցաբերվել է դրամական օգնություն -1975,0 հազար դրամ

12. Աղբահանության համար 1399,0 հազ. դր
13. Ճանապարհների խճապարում և տապանում 980,0 հազ. դր
14. Տեղեկատվական ծառայություն 83,0 հազ. դր
15. Կենցաղային նյութերի համար ծախսվել է 570,0 հազար դրամ
16. Մանկապարտեզին փոխանցվել է սուբսիդյա - 5771,3 հազար դրամ

Ազգայնակցություն.

ա) Համայնքի փաստացի բնակչությունը կազմում է 3172 մարդ:
2014 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Ջրառատ համայնքում ծնվել է 14 երեխա, գրանցվել է 11 մահ:
Ընտանեկան նպաստ ստացողներ 47 ընտանիք
Համայնքում թոշակատուները 307 հոգի են:

5. Կրթություն և գիտություն

Համայնքում գործում է մեկ դպրոց 318 աշակերտով: Մեկ մանկապարտեզ՝ հաճախող 60 երեխայով և 12 աշխատողով:

6 Մշակույթ

Համայնքը ունի մեկ մշակույթի տուն 6 աշխատողով, գործող գրադարան 1 աշխատողով:

Մշակույթի տանը գործում է ազգագրական պարերի խումբ՝ 32 երիտասարդով և սպորտի խմբակներ բռնցկամարտի, մարտեր առանց կանոնների և ծանրամարտ:

7 Առողջապահություն.

Համայնքում գործում է բժշկական ամբուլատորիա 11 աշխատողով:

8 Ջինակոչ.

Համայնքի ղեկավարի և աշխատակազմի գործուն աջակցությամբ պատշաճ կերպով կազմակերպվել է 2014 թ-ի գարնանային զինակոչը և կատարվել է պլան առաջադրանքը:

9. Միջոցառումներ և սոցիալական ոլորտ.

Պատշաճ կերպով նշվում են Հ. Հ. պետական տոները և հիշատակի օրերը: Ըստ հարկի նշվում և կազմակերպվում են Հայաստանի Հանրապետության սահմանադրության օրը:

Պարբերաբար իրականացվում է գյուղի փողոցների աղբահանությունը: Անխափան իրականացվում է խմելու ջրի մատակարարում:

10. Համայնքի հիմնախնդիրներ.

ա) Համայնքի հիմնախնդիրներից է համարվում համայնքային նշանակության ճանապարհների նորոգում (հարթեցում, ավազապատում), որը կկազմի մոտ 20.000.000 ՀՀ դրամ

բ) Վերանորոգման կարիք ունի նաև գյուղապետարանի շենքը, որի ծախսը կկազմի մոտ 10.000.000 ՀՀ դրամ

գ) համայնքի հիմնախնդիրներից է նաև համայնքի նոր թաղամասերի արտիզյան ջրհորների հորատման և էլեկտրաֆիկացման հարցը, որի համար կծախսվի մոտ 25.000.000 Հ. Հ. դրամ:

Ջրառատի գյուղապետ



Ս. Գալստյան